ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մասնագիտություն Տարրական մանկավարժություն և մեթոդիկա

ԹԵՄԱ «ՄԱՅՐԵՆԻ 3» ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑԻ ՕԺԱՆԴԱԿ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԴԵՐԸ ԿԱՐԴԱԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ»:

Կատարող Խաչատրյան Վարդուհի

Ղեկավար Գյուլամիրյան Ջուլիետա

ԵՐԵՎԱՆ 2022

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ցանկացած դասագրքի բովանդակությունն ու կառուցվածքն արտահայտում են կրթության ոլորտում կատարվող մանկավարժամեթոդական նորարարությունները և արտացոլում են յուրաքանչյուր փոփոխություն՝ պահպանելով չափորոշիչային և առարկայական ծրագրերում սովորողների գիտելիքներին և կարողություններին տարեվերջին ներկայացված վերջնարդյունքները: Այս վերջնարդյունքների ապահովման խնդիրները լուծելու նպատակադրման արդյունավետության ապահովմանը մեծապես նպաստում են մայրենիի դասագրքերի մեթոդական կառույցում ներկայացված հարցերն ու առաջադրանքները, իսկ դասագրքերի օժանդակ բաղադրիչները նպաստում են ոչ միայն ուսումնական նյութի նկատմամբ հետաքրքրության զարգացմանը, այլև ամբողջացնում են և ամրակայում ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները: Այս իմաստով, տարրական դասարանների մայրենիի դասագրքերը հարուստ են օժանդակ բաղադրիչներով, և դրանց մեթոդապես ճիշտ կիրառումը մեծապես կնպաստի դասագրքում զետեղված ուսումնական նյութերի նկատմամբ սովորողների հետաքրքրության զարգացմանը, մայրենիի նկատմամբ սիրո առաջացմանը:

Մեր մագիստրոսական թեզի հիմնախնդրի **արդիականությունը** պայմանավորված է մայրենիի տարրական դասընթացի նկատմամբ սովորողների հետաքրքրաշարժության ապահովման անհրաժեշտությամբ, այդ համատեքստում մայրենիի դասագրքերի մեթոդական կառույցի օժանդակ բաղադրիչների ունեցած դերով և դրանց կիրառման մեթոդիկայի անկատարությամբ:

Մեր ուսումնասիրության **նպատակն է** բացահայտել մայրենիի դասագրքերի մեթոդական կառույցի օժանդակ բաղադրիչների հնարավորություններն ու ներկայացնել մայրենիի դասի արդյունավետության բարձրացմանը նպաստող մեթոդական ցուցումներ:

Նշված նպատակին հասնելու համար մեր առջև դրել ենք հետևյալ **խնդիրները**՝

1. Տարրական դպրոցի մայրենիի դասագրքերի մեթոդական կառույցի օժանդակ բաղադրիչների դիտարկում,
2. Դասակարգել մայրենիի դասագրքերի մեթոդական կառույցի օժանդակ բաղադրիչների տեսակները և որոշել դրանց ուսումնասիրման դերը, գործընթացի բնույթը մայրենիի դասերի ընթացքում:
3. Ուսումնասիրել տարրական դպրոցում հիմնախնդրի դրվածքը և վերլուծել արդյունքները:

4. Ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա մշակել մեթոդական ցուցումներ:

Ուսումնասիրության օբյեկտը տարրական դպրոցում իրականացվող մայրենիի դասերի արդյունավետությանը նպաստող բազմաբաղադրիչ հնարավորություններն են:

Ուսումնասիրության առարկան տարրական դասարանների մայրենիի դասագրքերի օժանդակ բաղադրիչներն են և դրանց ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը նպաստող ձևերը:

Ուսումնասիրությունների ընթացքում կիրառել ենք հետևյալ **մեթոդները.**

- հիմնախնդրի վերաբերյալ առկա մասնագիտական գրականության ուսումնասիրություն և արդյունքների վերլուծություն,
- մայրենիի ծրագրի և դասագրքերի դիտարկում և վերլուծություն,
- դասալսումներ, զրույցներ ուսուցիչների հետ և արդյունքների քննարկում,
- հարցախույզ ուսուցիչների շրջանում,
- փորձարարական դասերի վարում և ընթացքի վերլուծություն:

Ուսումնասիրության տեսական նշանակությունը. ներկայացրել ենք և հիմնավորել մայրենիի դասագրքերի օժանդակ բաղադրիչների դերը ծրագրային նյութերի ուսումնասիրման գործընթացի արդյունավետության և հետաքրքրաշարժության բարձրացման համատեքստում:

Ուսումնասիրության գործնական նշանակությունը. Մեր ուսումնասիրության արդյունքները, դրանց հիման վրա մշակված մեթոդական ցուցումները կարող են պիտանի լինել ինչպես ուսանողներին, այնպես էլ տարրական դպրոցի հիմնախնդիրներով հետաքրքրվող մասնագետներին:

ԳԼՈՒԽ 1.

1.3 Մայրենիի դասագրքերի օժանդակ բաղադրիչների դերը աշակերտների ուսումնական գործունեության բաղադրիչների համակարգում

Տարրական դպրոցի մայրենիի ծրագրային նյութերի շրջանակում ստեղծված ուսումնական ձեռնարկները պարունակում են մեթոդական ցուցումներ, դասի պլաններ, վարժություններ և առաջադրանքներ, բառարաններ և այլն: Այսօր ուսուցիչների և աշակերտների համար ստեղծված են նաև տեղեկատու գրքեր, պատմական և աշխարհագրական քարտեզներ, քրիստոմատիաներ, ինքնուրույն ընթերցանության, վարժությունների ժողովածուներ և այլն:

Նշված ուսումնական օժանդակ նյութերի շուրջ աշխատանքի ընթացքում աշակերտները սովորում են ինքնուրույն սովորել, ձեռք են բերում հավաքած տեղեկությունները վերլուծելու, համադրելու, հակադրելու, լրացնելու, լրամշակելու և ձևակերպելու կարողություններ, զարգացնում են իրենց խոսքը և այլն:

Այսինքն, մայրենիի դասագրքերը և ուսումնաօժանդակ ձեռնարկները տեղեկատվական միջոցներ են, որոնք արտացոլում են ոչ միայն ուսուցման տեսությունը և մեթոդաբանությունը, ձեռքբերվող գիտելիքների շրջանակը, այլև աշակերտների պիտանի հմտությունները և մարդկային գործունեության ընդհանուր մշակույթն ու փորձը՝ ապահովելով կրտսեր դպրոցականի անձի ամբողջական զարգացումն ու ձևավորումը:

Մեզ հետաքրքրում էր տարրական դասարանների ուսուցիչների կարծիքը մայրենիի դասագրքերի օժանդակ բաղադրիչների վերաբերյալ և այն, թե ինչպես են նրանք իրականացնում դրանց շուրջ աշխատանքը: Այս նպատակով մենք իրականացրինք հարցախույզ տարրական դպրոցի ուսուցիչների շրջանում: Հարցախույզին մասնակցեց 30 ուսուցիչ:

Տարրական դպրոցի ուսուցիչների շրջանում մեր իրականացրած հարցաթերթիկային ուսումնասիրության արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ ուսուցիչների կարծիքով մայրենիի դասագրքերում զետեղված ուսումնաօժանդակ նյութերն ու առաջադրանքները նպաստում են ոչ միայն աշակերտների ծավալած ուսումնական գործունեության ակտիվացմանը, ուսումնասիրվող նյութի նկատմամբ հետաքրքրության և դրական ուսումնական դրդապատճառների ձևավորմանը, այլև

ուսուցիչների մանկավարժական փորձի հարստացմանն ու նրանց գործունեության գիտականության ապահովմանը:

Հարցաթերթիկի առաջին՝ «Գրե՛ք խնդրեմ, թե բացի մայրենիի դասագրքից ուրիշ ինչ ձեռնարկներից եք օգտվում Ձեր դասը պլանավորելիս» հարցին մասնակից ուսուցիչներից 21-ը նշել էին Ջ. Գյուլամիրյանի «Մայրենիի ուսուցման մեթոդիկա» բուհական դասագիրքը, 8-ը նշել էին Կ. Թորոսյանի «Ինչպես պլանավորել մայրենիի դասը», 9-ը՝ «Մայրենիի 2-4 ուսուցչի ձեռնարկը», 6-ը՝ Ջ. Գյուլամիրյանի «Արտագրությունների, թելադրությունների, փոխադրությունների, շարադրությունների ձեռնարկը», 3-ը՝ Ա. Գասպարյանի, Ա. Բալայանի «Ինքնուրույն ընթերցանության նյութերը», 4-ը՝ «Խոսք և հաղորդակցումը», 2-ը՝ Ռ. Նաջարյանի «Մայրենին բոլորի համար», 8-ը՝ Ջ. Գյուլամիրյանի «Խաղալով սովորենք» ձեռնարկները: [8,3]

Մենք բացահայտեցինք, որ լրացուցիչ ձեռնարկներից ավելի շատ օգտվում են 5-10 տարվա աշխատանքային փորձ ունեցող ուսուցիչները, քիչ ավելի պակաս՝ 10-20 տարվա, իսկ 20-25 տարվա փորձ ունեցող ուսուցիչներից միայն երեքն է օգտվում ուսումնաօժանդակ ձեռնարկներից: Մենք այս հանգամանքը բացատրում ենք մի քանի հիմնավորմամբ. ա) երիտասարդ ուսուցիչները ծանոթ են հրատարակված մեթոդական գրականությանը դեռևս ուսանողական տարիներից և գիտակցում են դրանց անհրաժեշտությունը, բ) տարեց ուսուցիչները գնահատում են իրենց փորձառությունը կամ հաճախ իրազեկված չեն նման գրքերի, հոդվածների հրատարակվելու մասին:

Հարցաթերթիկի երկրորդ հարցին ի պատասխան՝ ուսուցիչների նշած մոտեցումները ներկայացրել ենք Գծապատկեր 7-ում:

Այս հարցին ուսուցիչների տված պատասխաններն ընդհանուր առմամբ մեզ գոհացրին, մանավանդ եթե հաշվի առնենք, որ հարցը փակ էր, այսինքն՝ մենք պատասխան – տարբերակներ չէինք ներկայացրել: Փաստորեն բոլոր ուսուցիչները նշել էին միջինը 3-4 ուսումնաօժանդակ ձեռնարկի վերնագիր, որը վկայում է, որ նրանք կարդում են մասնագիտական գրականություն:

2. Ձեր վարած մայրենիի դասի ժամանակ աշակերտները քանի րոպե են աշխատում դասագրքով



Տրամագիր № 7.

Ինչպես երևում է տրամագրից, մայրենիի դասի ընթացքում ըստ ուսուցիչների պատասխանների՝ աշակերտներն աշխատում են 15-20 րոպե: Եթե այս թիվը մենք դիտարկենք 45 րոպեանոց դասի չափանիշներով, ապա կտեսնենք, որ բավականին շատ ժամանակ է հատկացվում դասագրքով աշխատելուն: Փաստորեն, այսօր դասագիրքը դեռևս մնում է եթե ոչ միակ, ապա գիտելիքների հիմնական աղբյուրը և գործիքը: Կարծում ենք, որ դեռևս ժամանակակից դպրոցում տեղեկատվական տեխնոլոգիաները մայրենիի դասերի ընթացքում անհրաժեշտ տեղ չեն զբաղեցնում:

Հարցաթերթիկի երրորդ հարցի միջոցով մենք պարզեցինք ուսուցիչների կարծիքը մայրենիի դասագրքերի օժանդակ բաղադրիչների կիրառման անհրաժեշտության վերաբերյալ: Այս հարցին ուսուցիչների տված պատասխանները ներկայացրել ենք ստորև բերված տրամագրով:

3.Մայրենիի դասագրքերի օժանդակ բաղադրիչների դերը ուսումնական նյութի յուրացման գործընթացում



Տրամագիր № 8.

Ինչպես ցույց են տալիս հարցախույզի արդյունքները, հարցմանը մասնակից 30 դասվարներից 11-ը չեն պատասխանել հարցաթերթիկի **չորրորդ՝** «Եթե դուք լինեիք դասագրքի հեղինակը, «օժանդակ կառույցում» ի՞նչ խորագրեր կավելացնեիք» հարցին, 7-ը պատասխանել են՝ գլուխկոտրուկներ, 5-ը՝ հանելուկներ, 2-ը՝ քերականություն, 7-ը՝ հետաքրքրաշարժ հայոց լեզու, 3-ը՝ ազգային խորագրեր, 1-ը՝ դաս-ներկայացումներ: Ինչպես ցույց են տալիս ուսուցիչների պատասխանները, օժանդակ բաղադրիչների ցանկում նրանք ավելի շատ կարևորում են դասի հետաքրքրությունն ու աշակերտների ակտիվությունը բարձրացնող բաղադրիչները:

«Դասագիրքը զանգվածային պահանջարկ ունեցող կրթական գիրք է, որում արտահայտվում է ուսումնասիրվող առարկայի բովանդակությունը և սահմանում աշակերտների կողմից որոշակի ուսումնական տարում պարտադիր տիրապետման համար նախատեսված գիտելիքների և կարողությունների տեսակները՝ հաշվի առնելով նրանց տարիքը և այլ հատկանիշները»[15]:

Մենք ուսումնասիրեցինք ՀՀ տարրական դպրոցի տարբեր տարիների դասագրքերը: Մեր ուսումնասիրությունների ընթացքում պարզեցինք, որ տարիներ շարունակ մայրենիի դասագրքերը բոլոր իմաստներով կատարելագործվել են ինչպես բովանդակությամբ, այնպես էլ կառուցվածքով՝ պայմանավորված ոչ միայն տվյալ դասագրքին առնչակից գիտության ոլորտում կատարվող նորամուծություններով,

կրթության նկատմամբ հասարակության պահանջներով, երկրի քաղաքական-տնտեսական բարեփոխումներով, այլև սովորողների տարիքային առանձնահատկություններով, նրանց ճանաչողական հետաքրքրությունների և պահանջմունքների փոփոխությամբ:

1.4 ՀՀ տարրական դպրոցի «Մայրենի 3» դասագրքի հիմնական մեթոդական բաղադրիչները

Քանի որ մենք մեր ուսումնասիրության հիմնական փուլում աշխատում ենք III դասարանում, հնարավորություն ունեցանք աշխատելու «Մայրենի 3» դասագրքով և առավել մանրակրկիտ (աշախատանքային ընթացքը մեզ ընձեռեց այդ հնարավորությունը) դիտարկել նրա կառուցվածքը:

Մենք դասակարգեցինք դասագրքի կառուցվածքի հիմնական բաղադրիչները: Դրանք հետևյալներն են.



Տրամագիր № 9.

Դիտարկենք այդ բացադրիչներն առանձին-առանձին:

Հայտնի է, որ դասագրքի մեթոդական կառույցի բաղադրիչների բազմազանությունը և համամասնությունը որոշվում են տվյալ առարկայի ուսումնական ծրագրի մեթոդաբանական հայեցակարգով, ներկայացված տեղեկույթի տեսակների բազմազանությամբ և այն ուղիներով, որոնք մշակվում և ներկայացվում են դասագրքում՝ հաշվի առնելով տվյալ դասարանի սովորողների տարիքային առանձնահատկությունները, հոգեկան գործընթացների մակարդակները, մտավոր ունակությունները, ճանաչողական հետաքրքրությունները, ուսումնական դրդապատճառները և այլն: Մենք կարևորում ենք այս գործընթացում նաև դասագրքերի հեղինակային խմբերի արժեհամակարգի բաղադրիչները, ազգային լեզվի նկատմամբ նրանց վերաբերմունքը, կրթության վերաբերյալ նրանց մոտեցումները: «Մայրենիի 3» դասագրքի կառուցվածքի ուղղությամբ մեր դիտարկումները և այդ առնչությամբ մասնագիտական գրականության ուսումնասիրությունը մեզ հանգեցրին այն **եզրակացության**, որ դասագրքի ողջ բովանդակությունը ներկայացված է որպես գիտելիքների ամբողջական համակարգ և դրանց ձեռքբերման հմտությունների հիմք:

«Մայրենիի 3» դասագիրքը լեզվաբանական և գրականագիտական գիտությունների ոլորտից բազմակողմանի տեղեկույթ է պարունակում և ներկայացնում է տվյալ գիտական ոլորտի բովանդակությունը, բազմաբնույթ պատմական հասկացությունների, զարգացման և փոխազդեցության գործընթացը՝ ուսումնասիրելու համար զանգվածային և տեղեկատվական համալիր: Սակայն դասագրքում ներկայացված գիտական նյութի ընտրությունն ու խնդիրներն ունեն բոլորովին այլ նպատակներ և ձևեր:

Բազմաթիվ դասագրքերի, այդ թվում՝ տարրական դպրոցի մայրենիի դասագրքերի ուսումնասիրության ընթացքում համոզվել ենք, որ այդ դասագրքերը միաժամանակ պարունակում են գաղափարախոսական և քաղաքական ընդարձակ խնդիրներ լուծող ստեղծագործություններ, որոնք համապատասխանում են գիտության տվյալ ոլորտի ժամանակակից հիմնական գիտական հասկացություններին՝ տվյալ առարկայի կրթական ծրագրի պահանջներին, ինչպես նաև սովորողների տարիքային և հոգեբանական բնութագրերին, կրթական հաստատությունների նպատակներին, կառուցվածքին, մեթոդական ժամանակակից պահանջներին և այլն:

Նկատի ունենալով վերը նշված խնդիրները, դասագրքում ուսումնական նյութերի ներկայացման բովանդակության և ձևերի ինքնատիպությունը՝ «Մայրենիի 3»

դասագրքի հեղինակները մեթոդական կառույցի բաղադրիչները ձևավորել են՝ հաշվի առնելով ոչ միայն տվյալ դասարանների սովորողների տարիքային առանձնահատկությունները, մտավոր կարողություններն ու ճանաչողական հետաքրքրությունների ինքնատիպությունը: Միայն այդպիսի մոտեցման դեպքում դասագիրքը կդառնա «լավը»: Իսկ ի՞նչ է նշանակում «լավ» դասագիրք: Մեր կարծիքով, «լավ» դասագիրքն այն է, որը նախ և առաջ նպաստում է աշակերտների ճանաչողական հետաքրքրությունների բավարարմանը և լուծում է ծրագրով նախատեսված խնդիրները, աշակերտին մղում է նոր հարցերի, հետաքրքրություն առաջացնող խնդիրների ստեղծագործական ուսումնասիրության: Այն միաժամանակ արտացոլում է հասարակության զարգացման հիմնական օրենքները, որպեսզի մարդը կարողանա արժանահավատորեն գնահատել ներկայի և ապագայի ուղենիշները և պատրաստ լինի հասարակության քաղաքացին դառնալու:

Տարրական դպրոցի մայրենիի ծրագրով նախատեսված ուսումնական նյութի բովանդակությունը դիտարկվող մայրենիի դասագրքում բացահայտվում է տարաբնույթ նյութերի միջոցով, իսկ ուսումնական նյութերի տրամաբանությունն ու զարգացումը նպաստում են ուսումնական նյութի գիտակցական յուրացմանը:

«Մայրենիի 3» դասագրքում զետեղված ուսումնական նյութի տրամաբանությունն ապահովում է հայոց լեզվի՝ որպես գիտության մեթոդաբանության և ծրագրով նախատեսված գիտելիքների ու նրանց ձեռքբերման մեթոդիկայի ոլորտի փոխհարաբերությունը, ինչպես նաև կրթական հաստատության կառուցվածքի բաղադրիչների փոխգործակցությունը: Այսինքն, դասագրքի ուսումնական նյութի պարտադիր բաղադրիչները պայմանների և հասկացությունների, փաստերի և գործունեության համադրություն են, որոնք պիտի աշակերտները յուրացնեն մեթոդական կառույցի բաղադրիչների միջոցով:

Մեր մանկավարժական պրակտիկաների և ուսուցչի փորձի հատուկ ուսումնասիրությունների ընթացքում համոզվեցինք, որ մայրենիի ծրագրով նախատեսված ուսումնական նյութերի յուրացման և համարժեք կարողությունների ձեռքբերման նպատակով տարրական դպրոցում միայն մայրենիի դասագրքերը չեն օգտագործվում: Օրինակ, սովորողների խոսքի զարգացման ուղղությամբ մայրենիի դասագրքերում առկա մեթոդական կառույցի խնդիրներն այսօր իրականացվում են

նաև ժամանակակից ուսումնական այլ՝ օժանդակ ձեռնարկների միջոցով, որոնց մեջ, այնուամենայնիվ, դասագիրքը հատուկ դեր և նշանակություն ունի[15]:

Ուսուցիչների շրջանում իրականացրած մեր հարցումների ընթացքում պարզեցինք, որ ուսուցիչներն օգտվում են մայրենիի ծրագրի բովանդակության յուրացմանը նպաստող տարբեր ուսումնական և մեթոդաբանական համալիրներից, որոնց մեջ են մտնում դասագրքեր և ուսումնական ձեռնարկներ, ուղեցույցներ, ուսուցիչներին հասցեագրված մեթոդական հանձնարարականներ, չափորոշիչներ և այլն: Այս համալիրներում ուսուցչի իմաստալից և նպատակաուղղված աշխատանքը ուղղակիորեն նպաստում է տարրական դասարանների աշակերտների կողմից ուսումնական նյութի յուրացման արդյունավետության վրա:

Այնուամենայնիվ, տարրական դպրոցի մայրենիի ժամանակակից դասագրքերը, ուսումնական գործընթացի հիմքն ընթերցանության, քերականության, ուղղագրության, կետադրական նշանների և խոսքի զարգացման վարժությունների ամբողջություն են: Դրանք գործածվում են դասի բոլոր փուլերում: Մենք ուսումնասիրել ենք և ներկայացրել «Մայրենիի» բոլոր դասագրքերի գործառույթները:

Ներկայացնենք դրանք գծապատկերի տեսքով:

Ուսուցման գործընթացում մայրենիի ժամանակակից դասագրքերի գործառույթներն ըստ բաղադրիչների

1. կրտսեր դպրոցականի հոգեկան գործընթացների զարգացմանը նպաստող բաղադրիչ
2. մայրենիի ուսումնական նյութերի ձեռք բերման հետաքրքրաշարժությունն ապահովող բաղադրիչ
3. ուսումնական նյութերի ներկայացում՝ մայրենիի ծրագրին համապատասխան լեզվական երևույթների ուսումնասիրմանը նպաստող բաղադրիչ
4. կրտսեր դպրոցականի ճանաչողական հետաքրքրությունների ընդլայնմանն ու բավարարմանը նպաստող բաղադրիչ
5. սովորողների մտավոր ունակությունների զարգացմանը նպաստող բաղադրիչ
6. մայրենի լեզվի հանդեպ սիրո դաստիարակությանը, աշակերտների ինքնաբավ արտահայտման նպաստող բաղադրիչ
7. սովորողների սոցիալականացմանը նպաստող բաղադրիչ
8. աշխուժացնող, թարմացնող, առողջապահական բաղադրիչ

Ուսուցման գործընթացում մայրենիի ժամանակակից դասագրքերի գործառույթներն ըստ բաղադրիչների
կրտսեր դպրոցականի հոգեկան գործընթացների զարգացմանը նպաստող բաղադրիչ
մայրենիի ուսումնական նյութերի ձեռք բերման հետաքրքրաշարժությունն ապահովող բաղադրիչ
ուսումնական նյութերի ներկայացում՝ մայրենիի ծրագրին համապատասխան լեզվական երևույթների ուսումնասիրմանը նպաստող բաղադրիչ
կրտսեր դպրոցականի ճանաչողական հետաքրքրությունների ընդլայնմանն ու բավարարմանը նպաստող բաղադրիչ
սովորողների մտավոր ունակությունների զարգացմանը նպաստող բաղադրիչ
մայրենի լեզվի հանդեպ սիրո դաստիարակությանը, աշակերտների ինքնաբավ արտահայտման նպաստող բաղադրիչ
սովորողների սոցիալականացմանը նպաստող բաղադրիչ
աշխուժացնող, թարմացնող, առողջապահական բաղադրիչ

Տրամագիր № 9.

ԳԼՈՒԽ 2. ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԱԳՐՔԵՐՈՒՄ ՕԺԱՆԴԱԿ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԿՉԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1 Օժանդակ բաղադրիչների տեսակները և դրանց տեղն ու դերը մայրենիի դասագրքերում

Մեր մանկավարժական փորձով և հատուկ ուսումնասիրությունների ընթացքում համոզվել ենք, որ մայրենիի դասագրքերում զետեղված օժանդակ բաղադրիչները մեծապես նպաստում են մայրենիի գործընթացի արդիականացմանը, սովորողների հետաքրքրության զարգացմանը: Դրան նպաստում է այն, որ օժանդակ բաղադրիչների միջոցով լեզվական գիտելիքները տրվում են և՛ բնագրով, և՛ լեզվատրամաբանական բազմաբնույթ հետաքրքրաշարժ առաջադրանքներով, և՛ նկարներով, և՛ առածներով ու հանելուկներով, և՛ թատերականացված ձևերով, և՛ մրցույթներով, և՛ ճանաչողական-զարգացնող լրացուցիչ նյութերով: Օրինակ, այբբենարանի նախայբբենական շրջանում տրվող: «Հորինիր մի պատմություն նկարի շուրջ»: Առաջադրանքի համաձայն աշակերտները ուսուցչի հարցերի օգնությամբ պատմություն են հորինում նկարի շուրջ՝ գործածելով համապատասխան հիմնաբառեր և հասկացություններ, առանձնացնելով ուսումնասիրվող հնչյունը պարունակող բառեր: Մենք կիրառում ենք նաև հերոսների բնութագրում ըստ նկարների, պատմության հորինում զվարճալի, անհեթեթ սխալներով նկարների շուրջ և այլն: Այս բնույթի առաջադրանքները նպատակաուղղված են երեխաների խոսքի, ստեղծագործական երևակայության զարգացմանը, բնագրի գործուն յուրացմանը, բառապաշարի հարստացմանը, աշխարհաճանաչողական այս կամ այն գիտելիքի յուրացմանը, բնագրի և նկարազարդման կապերի հայտնաբերմանը և վերլուծությանը: Ով դա բնական է, որովհետև առաջադրանքների կատարման ընթացքում չկան խաղի կաշկանդող կանոնները, երեխաների երևեկայությունն ազատորեն կարող է ստեղծել ցանկացած պատմություն, բառերով «զգեստավորել» յուրաքանչյուր մտահղացում:

«Մայրենի 3» դասագրքում բազմաթիվ են այդպիսի նկարները, որոնց կից տրված առաջադրանքի համաձայն՝ երեխաները պետք է պատմություններ հորինեն կենդանիների, մարդկանց, նրանց կենցաղի, նրանց բնավորության, գործունեության ձևերի, տարբեր առարկաների, բույսերի և այլնի մասին, բնութագրեն հերոսներին և այլն:

Երեխաների հորինած պատմությունները գնահատելիս մենք սովորաբար հաշվի ենք առնում երեխաների երևակայելու արագությունը, կերպարների ու գործողությունների անսովորությունը, մտքերի յուրօրինակությունը, պատկերացումների հարստությունը, կերպարները բնութագրող մանրամասների առկայությունը, դրանց հուզականությունը, գործածած բառապաշարն ու դրանց դիպուկությունը և այլն: Բոլոր նկարներում կան նաև կատակային տարրեր, դրվագներ, որոնք նպաստում են երեխաների հումորի զգացողության զարգացմանը, օգնում, որ հորինած պատմություններում լինեն կատակ և ուրախություն: Երեխաներն առաջին հերթին մեր հանձնարարությամբ անուններ են դնում նկարի հերոսներին, նրանց գործողությունները, արարքները նկարագրելիս խանդավառվում են և ոգևորվում:

Երեխանեի մեջ մեծ աշխուժություն են առաջացնում «Մայրենի 3» դասագրքի «**Սխալ-ճիշտ**» բնույթի նկար-առաջադրանքները: Դրանք հետաքրքրաշարժ դիպաշարերով նկարներ են, որոնք պարունակում են զանազան <<անհեթեթություններ>>: Դրանք որոնք նկատելու, հիմնավորելու և ճիշտն արագ ներկայացնելու համար երեխայից պահանջվում են ոչ միայն գիտելիքներ, դիտունակություն, այլև արագ կողմնորոշվելու, մտքերն արագ ձևակերպելու կարողություններ, հումորի զգացում և այլն: Մեր դասերի ընթացքում համոզվել ենք որ

կրտսեր դպրոցականները շատ են սիրում այս ատաջադրանքները և կատարում են հաճույքով: Դրանց շնորհիվ հարստանում է նրանց բառապաշարը, բանավոր խոսքը, զարգանում է դիտողականությունը, հումորի զգացումը, արագ կողմնորոշվելու ունակությունը, դիտապատկերային և ստեղծագործական մտածողությունը, համադրելու կարողությունը:

Մեր դասերի ընթացքում համոզվել ենք, որ այսպիսի առաջադրանքների կատարման ժամանակ կարևորվում է ժամանակային գործոնը, երեխաները պետք է ոչ միայն գտնեն նկարում թույլ տված սխալները, այլև, որքան հնարավոր է, արագ գտնեն, հիմնավորեն, թե ինչու՛ է սխալ:

Դասաժամի արդյունավետ բաշխման նպատակով մեթոդական կառույցի օժանդակ բաղադրիչների շուրջ աշխատանքը մենք սովորաբար իրականացնում ենք խմբային աշխատանքի միջոցով, որը նպաստում է ոչ միայն երեխաների առավելագույն քանակի մասնակցությանը, այլև ուսումնասիրվող ուսումնական նյութի նկատմամբ հետաքրքրության դրսևորմանը,համագործակցային կարողությունների ուսումնական դրդապատճառների ձևավորմանը:

Ներկայացնե՛նք

Ուսումնաօժանդակ բաղադրիչի շուրջ աշխատանքներից մեկի ընթացքը:

Ներկայացնել նման մի նկար

և նշել, թե աշակերտները ինչ տարբերություններ կամ սխալներ նկատեցին

Հանձնարարության շուրջ աշխատելու համար դասարանը բաժանեցինք 3 խմբի: Խմբերը հերթով ներկայացրին նկարի մեջ իրենց նկատած անհեթեթություններն ու սխալները: Դրանք մենք նշեցինք գրատախտակին: Հաղթեց այն խումբը, որը ոչ միայն ամենաշատ սխալներ ու անհեթեթություններ էր նկատել, այլև կարողանում էր գրագետ և տրամաբանական մեկնաբանել դրանք:

Այդ նկարները, որպես կանոն, պարունակում են կատակներ, հումորով են նկարված, զավեշտալի մանրամասներով լի են, ծիծաղաշարժ են, ուրախություն ու զվարթություն բերող:

Անհեթեթ սխալներով լի նկարների մեջ աշխարհը, կարծես, շրջված է, ամեն ինչ այնպես չէ, ինչպես որ պետք է լիներ: Երեխաները հանդիպում են այնպիսի երևույթների, առարկաների, կենդանիների ու բույսերի, որոնք թեև իրենց ծանոթ են, սակայն զավեշտալի ձևափոխությունների են ենթարկվել, ծիծաղելի իրավիճակներում

հայտնվել: Մեր դասերի ժամանակ համեզվեցինք, որ այս ամենը մեծ ուրախություն է պատճառում երեխաներին, նրանց աշխարհաճանաչողական իմացությունները բախվում են երևակայականի հետ: Երեխաները զգում են, որոշում են սխալները, դա նրանց բերկրանք և ուրախություն է պարգևում:

«Մայրենի 3» դասագրքում քիչ չեն նաև կատակ ու հումոր պարունակող նյութերը, որոնք անփոխարինելի են նաև բառերի, արտահայտությունների փոխաբերական իմաստներն ընկալելու առումով:

Մեր վարած մայրենիի դասերի ժամանակ զանազան մեթոդական հնարների միջոցով ձգտում ենք աշխատանքն այնպես կազմակերպել, որ երեխաներն առավել ինքնուրույնություն ցուցաբերեն նկար-պատմությունը հյուսելիս, սովորեցնում ենք թեմատիկ նկարները «կարդալ»՝ դիտարկելով այն բազմակողմանիորեն ու մանրամասներով, որքան կարելի է շատ բան տեսնել ու շատ բան պատմել: Մենք միաժամանակ նկատեցինք, որ նկարի բովանդակության բանավոր վերարտադրումը աշակերտներին մղում է ինքնուրույն խոսք կառուցելու և նպաստում է նրանց ստեղծագործական երևակայության զարգացմանը, ուսումնական նյութի նկատմամբ հետաքրքրության զարգացմանը:

«Մայրենի 3» դասագրքի մեթոդական կառույցի օժանդակ բաղադրիչները ուսումնասիրելիս մենք նկատեցինք, որ այստեղ ներկայացրած որոշ տեսակներ սովորողները դժվարանում են կատարել: Բացահայտելու համար դրա պատճառները՝ մենք ուսումնասիրեցինք նաև Վ.Սարգսյան և այլք հեղինակային խմբի «Մայրենի 2»[8] դասագիրքը: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այստեղ ևս օժանդակ բաղադրիչները կարևոր դեր ունեն: Այսպես, դասագրքի օժանդակ բաղադրիչների շարքում իրենց ուրույն տեղն ունեն «Նկարելուկները» : Դրանք նկարների, նշանների, տառերի, նրանց փոխադարձ դասավորության, գույների և պատկերային այլ հնարքների համակցության միջոցով ծածկագրված բառեր կամ արտահայտություններ են, որոնք երեխաներին գրավում են իրենց պատկերավորությամբ, հետաքրքրաշարժությամբ, խառնաշփոթ պատկերներից պատասխանը դուրս բերելու հնարավորությամբ, լեզվի թաքնված հնարավորություններն ու գեղեցկությունները բացահայտելու ընթացքում ստացած բավականությամբ: Նկարները նպաստում են նաև տրամաբանական մտածողության, երեխաների մեջ խնդիրը մինչև վերջ լուծելու կամքի և համառության, երևակայության վերացական մտածողության զարգացմանը:

«**Խառնագիր**» խորագրով օժանդակ բաղադրիչի առաջադրանքները նպաստում են երեխաների վերլուծական-համադրական մտածողության զարգացմանը, կարդալու տեխնիկայի կատարելագործմանը, մարզում են հիշողությունը, օգնում են բառի հնչյունային (տառային) վերլուծության կարողությունների ամրապնդմանը, որոնք նպաստում են մայրենի լեզվի նկատմամբ սովորողների հետաքրքրության զարգացմանը:

Մեր ուսումնասիրությունները մեզ հանգեցրել են այն եզրակացության, որ խառնագրերի կատարումը նպաստում է նաև կրտսեր դպրոցականների կարդալու կարողության զարգացմանը: Դրանք դասարանից-դասարան աստիճանաբար բարդանում են և դառնում տարաբնույթ:

«Խառնագրի» ձախ մասում, սովորաբար, բառեր չեն տրված, այլ՝ անիմաստ տառաշարքեր, որոնք երեխաները պիտի դասավորեն ճիշտ հերթականությամբ և ստանան բառեր: «Խառնագիրը» վերծանելուց հետո սովորաբար աշակերտները կատարում են զանազան գործողություններ: Օրինակ՝ վերծանված բառաշարքում գտնել «ավելորդ» բառը և այլն:



Ըստ «**Նույնտառիկ**» բառախաղի՝ երեխաները տրված ելակետային բառերի բոլոր տառերով պետք է ստանան նոր բառեր: Այս խաղը շատ նման է «Խառնագիր» խաղին և դարձյալ նպաստում է կարդալու տարրական կարողության զարգացմանը, հետաքրքրություն է ատաջացնում լեզվի նկատմամբ:

«Մայրենի 3» [9] դասագրքում զետեղված «**Գտի՛ր ավելորդը**» առաջադրանքների շարքը կատարելու համար անհրաժեշտ է տրված բառերից (պատկերներից) առանձնացնել այն մեկը, որը «չի մերվում» մնացածներին, որոնք իրար հետ կապված են որևէ ընդհանուր հատկանիշով: Այդ հատկանիշը յուրաքանչյուր խաղում փոխվում է: Այն կարող է լինել իմաստային, առարկաների արտաքին և ներքին կողմերին վերաբերող, լեզվական և այլն: Այդպիսի աշխատանք երեխաները կատարում են նաև

երկրորդ դասարանում: Այն նպաստում է առարկաները որևէ ընդհանուր հատկանիշով խմբավորելու երեխաների կարողության զարգացմանը: Նրանք մի քանի անգամ կարդում են տրված բառերը, հիշում են դրանք, գտնում են ընդհանուր կապը, եզրակացությունը ձևակերպում են մտքում, ապա բարձրաձայն արտահայտում և, ի վերջո, հիմնավորում ընտրությունը:



«**Բառքամոցի**» խաղը հետաքրքրում է ինչպես աշակերտներին, այնպես էլ մեծահասակների շրջանում: Ասում են, որ այս խաղի մեծ սիրահար են եղել Պարույր Սևակն ու Լևոն Հախվերդյանը:

Մեր մանկավարժական պրակտիկայի ժամանակ համոզվեցինք, որ երեխաները մեծ հաճույքով են կատարում այս բնույթի առաջադրանքները: Դրանք նպաստում են աշակերտների բառապաշարի հարստացմանը, օգնում արագ կողմնորոշվելուն, զարգացնում երեխաների համադրական մտածողությունը, սեր և հետաքրքրություն են արթնացնում լեզվի նկատմամբ, դաստիարակում են ցանկացած գործ մինչև վերջ հասցնելու հետևողականություն, արթնացնում են առողջ մրցակցային ոգի և այլն:

Այս խաղը բավականին պարզ է. անհրաժեշտ է նշված բառի տառերով կազմել (բառից «քամել»)եզակի թվով, ուղղական հոլովով հասարակ գոյականներ:

Այս խաղը զվարթություն է մտցնում դասի մեջ, մեծապես նպաստում է համագործակցային հմտությունների ձևավորմանը և շատ հարմար է խմբային աշխատանքի համար:



«Մայրենի 2» [8] և «Մայրենի 3» [9] դասագրքում մեծ տեղ է տրված «Շարունակի՛ր», «Օրինաչափություններ» օժանդակ բաղադրիչներին: Դասագրքերում և ուսումնաօժանդակ գրականության մեջ այս խորագրով զետեղված են բազմաթիվ առաջադրանքներ, որոնց ընթացքում սովորողները կատարում են տրամաբանական որևէ օրինաչափություն գտնելու և ըստ այդ օրինաչափության՝ առաջադրանքը շարունակելու հանձնարարություն: Յուրաքանչյուր դեպքում օրինաչափությունը փոխվում է, բայց ըստ տրված օրինակի նա կարող է կատարել առաջադրանքը: Այս խորագրով առաջադրանքներ կան թե՛ հնչյունի (տառի) մասին երեխաների գիտելիքների ձևավորման ու ամրապնդման ուղղությամբ, թե՛ վանկի, թե՛ ընդհանրացնող անվան թե՛ հոմանիշների, թե՛ հականիշների, թե՛ եզակի-հոգնակի և թե՛ լեզվական ու լեզվատրամաբանական այլ հասկացությունների վերաբերյալ:



Սովորողների մտածողությունը, ուշադրությունը, հիշողությունը զարգացնող, ինչպես նաև ճանաչողական բնույթի առաաջադրանքներ ևս զետեղված են այդ խորագրի տակ: Այդ առաջադրանքների կատարման ընթացքում երեխաները կրկնում են իրենց ձեռք բերած լեզվական գիտելիքները, մի շարք կարողություններ դառնում են

հմտություններ, երեխաները սովորում են իրենց ունեցած գիտելիքը կիրառել ոչ ստանդարտ իրավիճակներում, վերահսկում են իրենց կատարածը, կատարում անհրաժեշտ հետևություններ, բավարարում իրենց բնածին հետաքրքրությունները, բերկրանք ապրում իրենց գործունեության արդյունքով:

Նշենք, որ նմանատիպ առաջադրանքների մի մասը միտված է ոչ միայն ուսումնական նյութի նկատմամբ սովորողների հետաքրքրության, այլև տրամաբանական մտածողության զարգացմանը: Նրանք պետք է ներկայացված նկարաշարում գտնեն որևէ օրինաչափություն և շարքը շարունակեն ըստ դրա: Այս շարքի առաջադրանքները նպաստում են սովորողների մտածողության, հիշողության, ուշադրության զարգացմանը, առարկաների «ներքին», թաքնված կողմերը տեսնելու կարողության ձևավորմանը, առարկաների առաջին հայացքից աներևույթ հարաբերությունների պարզմանը և շարունակմանը:

«Զվարթ տրամաբանություն» խորագրի տակ մայրենիի դասագրքում ներկայացված են արձակ և չափածո, «լուրջ» կամ «կատակով», «սրամիտ» առաջադրանքներ, որոնք լուծելու համար աշակերտը դրսևորում է երևակայություն, հնարամտություն, սրամտություն, ոչ ստանդարտ մտածողություն: Աշակերտի աշխատանքը պարզեցնելու նպատակով դասագրքում տրված են որոշակի հուշումներ. անհրաժեշտության դեպքում նա կարող է դիմել գրքի վերջում տրված «Առաջադրանքների պատասխաններ» հավելվածին [9]:

Այս առաջադրանքներն ապահովում են նաև միջառարկայական կապեր, նպաստում են դասագրքում զետեղված բնագրերի բովանդակության յուրացմանը, սովորողների ոչ ստանդարտ մտածողության զարգացմանը, հնարամիտ ու սրամիտ լուծումներ գտնելու ունակության ձևավորմանը:

Մայրենիի տարրական դպրոցի դասագրքերում «Հետաքրքիր է իմանալ» խորագրով օժանդակ բաղադրիչում տրված են հետաքրքրաշարժ տեղեկություններ, հայերենի և հայ մարդու մասին ասույթներ, առածներ, տեղեկություններ շրջակա աշխարհից և այլն:Ուշագրավ են օրինակ, «Խոսքային վթարներ» խորագրի ներքո դասագրքում տրված նյութերը, որոնք աշակերտները սիրով և մեծ հետաքրքրությամբ են կատարում, սրբագրում, շտկում ուղղագրական և ոճական սխալները: Այս նյութերն օգնում են ավելի նրբին դարձնելու լեզվազգացողությունը, ամրապնդելու լեզվական գիտելիքները:

«Աղյուսակների կազմում»: Առաջնորդվելով կրտսեր դպրոցականի մտածողության առանձնահատկություններով՝ աղյուսակների կազմումը ապահովում է մայրենիի և մաթեմատիկայի միջառարկայական կապերի ստեղծմանը, օգնում են, որ երեխաները կարողանան զանազան տեղեկություններ հավաքել և համակարգել, դասդասել, ներկայացնել աղյուսակի տեսքով:

Մայրենիի դասագրքերում զետեղված են բազմաթիվ և բազմատեսակ խաչբառեր, որոնց միջոցով սովորողները հետաքրքրաշարժ ու գրավիչ ձևով տեղեկություն են ձեռք բերում, հարստացնում է երեխաների ակտիվ բառապաշարը, ինչպես նաև զարգանում են կենտրոնանալու, ուշադրությունը բևեռելու, ոչ ստանդարտ ձևով տրված հարցերին պատասխանել կարողանալու ունակությունները:

«Ի՞նչ խաղ կարող ես հորինել» առաջադրանքների խումբը [8] նպատակաուղղված է երեխաների ստեղծագործական երևակայության ու մտածողության զարգացմանը, ինչպես նաև ձեռք բերած գիտելիքները ոչ ստանդարտ իրավիճակներում կիրառելու սովորողների կարողությունների զարգացմանը: Ուշագրավ է, որ այս խորագրի տակ նաև տրված են նյութեր՝ առանց որևէ պայմանի: Աշակերտն ինքը պետք է որոշի, թե ինչ առաջադրանք է հնարավոր կազմել տրված նյութի շուրջ: Ուշագրավ է, որ ըստ տրված նյութի երեխաները ձևակերպում են ինքնատիպ առաջադրանքներ, հանձնարարություններ, որոնք վկայում են, որ սովորողները յուրացրել են ուսումնական նյութը, ավելին՝ կարողանում են ձեռք բերածը կիրառել ոչ ստանդարտ պայմաններում, ինչպես նաև նպաստում են ստեղծագործական կարողության զարգացմանը:

Այս առաջադրանքների կատարման արդյունքների ուսումնասիրության արդյունքում համոզվեցինք, որ նշված գործընթացում ամենից առաջ կատարելագործվում է աշակերտի ստեղծագործական երևակայությունը, որը պայմանավորված է նախկինում նրա ընկալածի, պատկերացրածի, անցյալի փորձի տպավորությունների վերափոխմամբ, վերամշակմամբ՝ դրանք նոր զուգորդումների մեջ միավորելով: Այս առաջադրանքի կատարման ընթացքում երեխաները վերհիշում են իրենց կատարած գործողությունները, ըստ դրանց ստեղծում են նոր առաջադրանքներ, կամ էլ հորինում բոլորովին նորը:

«Պատասխանը հարցի մեջ» խորագրի տակ տրված առաջադրանքներում պահանջվում է, որ աշակերտները տրված հարցի պատասխանը որոնեն հենց հարցի

բառերից որևէ մեկի մեջ: Այս առաջադրանքները առավելապես զվարթացնող բնույթի են: Առաջադրանքը կատարելու համար երեխաների ուշադրությունը մենք նախ սևեռում ենք հարցի մեջ պատրաստի պատասխանը (բառապատկերը) գտնելու, գործողություններ որոնելու վրա: Այդ նպատակով կարևոր են նրանց հնարամտությունն ու սրամտությունը, առաջադրանքի «թաքցրած» լուծումը գտնելու համառությունը և կամքը, անհրաժեշտ է մտածել, տրամաբանական կապեր գտնել երևույթների միջև, կարողանալ բառի մեջ բացահայտել այնպիսին, որը կարող է կապ ունենալ հարցի հետ և դառնալ լուծում:

Մեր և գործընկերների մանկավարժական փորձով համոզվել ենք, որ նշված և նմանատիպ առաջադրանքների արդյունավետությունը միանգամից չի երևում, դրանք աստիճանաբար դրականորեն են ազդում երեխաների կարդալու կարողության զարգացման վրա, ուժեղանում են նրանց դիտողականությունը, ոչ ստանդարտ իրավիճակներում կողմնորոշվելու ունակությունը, ինչպես նաև ստեղծագործաբար մտածելու կարողությունը, համադրելու և վերլուծելու ունակությունները:

«Որը որի անունն է: Ի՞նչը չկա նկարում» խորագրի տակ տրված առաջադրանքները նպաստում են երեխաների դիտողունակության զարգացմանը, բառապաշարի հարստացմանը, զարգացնում են նրանց կամածին ուշադրությունը, սովորեցնում են նկատել ու մտապահել իրերի և երևույթների մանրամասները, ինչպես նաև զարգանում է տարբեր երևույթների վրա ուշադրությունը բաշխելու երեխաների կարողությունը: Մենք մեր մանկավարժական փորձով համոզվել ենք, որ դրանք նպաստում են նաև նոր բառերի իմաստների յուրացմանը և մտապահմանը, աշակերտները սովորում են բազմաթիվ օտար բառերի հայերեն համարժեքները: Այս ճանապարհով բազմաթիվ կենցաղային, ամենօրյա գործածության առարկաների հայերեն անվանումները դառնում են նրանց սեփականությունը:

Օրինակ՝

холодильник – սառնարան

миксер – հարիչ


1

Պատասխանը հարցի մեջ

Ի՞նչ էր ուտում թութակը:

Փետուրները ցցելով՝ ի՞նչ ասաց թութակը:

Անուշն ի՞նչ տվեց նրան:

Թութակն ինչքա՞ն է սիրում փշատ:

58

Մայրենիի դասագրքերի մեթոդական կառույցի օժանդակ բաղադրիչները որպես ուսումնական նյութի յուրացման խթանիչներ

Հայտնի է, որ տարրական դասարանների մայրենիի դասագրքերի մեթոդական կառույցը բազմաբաղադրիչ է: Այն ունի ինչպես հիմնական նյութին առնչվող, նրա յուրացմանը նպաստող, այնպես էլ օժանդակ խնդիրներ լուծող նպատակներ:

Մեր մագիստրոսական թեզի հիմնախնդրով պայմանավորված՝ ուսումնասիրեցինք ՀՀ տարրական դպրոցում շուրջ երկու տասնամյակ գործող մայրենիի դասագրքերի մեթոդական կառույցի օժանդակ բաղադրիչները:

Այս գործընթացում բացահայտեցինք, որ, օրինակ երկրորդ դասարանի մայրենիի դասագիրքը կազմված է հետևյալ թեմատիկ խմբերից՝

- «Իմ դպրոցը և գրքերի կախարդական աշխարհը»,
- «Ոսկեծամիկ աշուն»,
- «Ժողովուրդն իմաստուն է»,
- «Տեսնես՝ լա՞վ է, թե վատ»,
- «Մեր խաղաղ տունն ու ընտանիքը»,
- «Բարև, ի՞նչ սառն են ձեռքերդ ձմե՛ռ»,
- «Երկնքից երեք խնձոր ընկավ»,

- «Գարուն է եկել»,
- «Մեր բարեկամ կենդանիները»,
- «Հայաստանը մեր հայրենիքն է»,
- «Աշխարհն էլ մի հեքիաթ է»:

«Մայրենի 2» [8] դասագրքի բոլոր դասանյութերն ավելի մատչելի դարձնելու, մայրենիի ծրագրի պարուրայնությամբ պայմանավորված, ընթացիկ կրկնությունների գործընթացի հետաքրքրությունն ու արդյունավետությունն ապահովելու, ինչպես նաև նոր գիտելիքներ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելու և այդ ամենով աշակերտներին հաճույք պատճառելու նպատակով զետեղված են բազմաթիվ խաղեր, կատակներ, բազմաբնույթ հետաքրքրաշարժ լեզվատրամաբանական և ստեղծագործական բնույթի առաջադրանքները:

Մայրենիի դասագրքերի յուրաքանչյուր թեմատիկ խմբում ընդգրկված են այնպիսի նյութեր (պատմվածքներ, բանաստեղծություններ, հեքիաթներ, առակներ, ճանաչողական և ուսուցողական մանրապատումներ, խնդուկներ, առածներ, հանելուկներ, սուտասելուկներ, շուտասելուկներ), որոնք համապատասխանում են կրտսեր դպրոցականների ճանաչողական հետաքրքրություններին, աշխարհընկալմանը, սովորողների տարիքային և անհատական առանձնահատկություններին:

Երրորդ դասարանի մայրենիի դասագիրքը կազմված է հետևյալ թեմատիկ խմբերով՝ [8]

- «Փոքրիկ պատուհան դեպի մեծ աշխարհ»,
- «Բա՛ց արա թերթերդ, տեսնենք հրաշքներդ»,
- «Ժողովուրդն իմաստուն է»,
- «Հայրենի՛ք, ես մի զարկն եմ քո բազկի»,
- «Լինում է, չի լինում՝ մի հեքիաթ է լինում»,
- «Ամենասովորական հրաշքներ»:

Չորրորդ դասարանի մայրենիի դասագիրքը [10] կազմված է հետևյալ թեմատիկ խմբերով՝

- «Հայաստանի յոթ և բյուր հրաշալիքները»,
- «Այ քեզ բան, ինչ կա-չկա, ինչ երևում-չի երևում՝ Հա՛յ-րե՛-նի՛ք է»,
- «Ես այսպե՛ս ասեմ, դու այնպե՛ս հասկացիր»,
- «Յոթ սարից, յոթ ձորից այն կողմ»,
- «Այս զարմանահրաշ մոլորակը»:

Նշված դասագրքերում զետեղված օժանդակ բաղադրիչների անվանումներն ինքնին խոսուն են. «Երևակայական զրույցներ հերոսների հետ», «Գրի՛ր մեկ բառով», «Բառագումար», «Բառանիվ», «Օրինաչափիկ», «Շարունակի՛ր», «Փոխակերպում», «Հականիշներ», «Բառախաղեր», «Հոմանիշներ», «Բառքամոցի», «Հանգեր-զանգեր», «Հորինի՛ր պատմություն», «Խառնագիր», «Խաչբառ», «Բառը՝ բառի մեջ», «Նույնտառիկներ», «Վանկախաղ», «Նկարելուկ» և այլն: Սրանք զարգացնող բնույթ ունեն և նպատակաուղղված են երեխաների մեջ ուսման նկատմամբ հետաքրքրություն սերմանելու, ուսուցման գործընթացն ավելի հետաքրքրաշարժ դարձնելն, ինչպես նաև համապատասխան խթան և սովորելու նկատմամբ շահագրգռություն ստեղծելուն:

Մեր մանկավարժական փորձով համոզվել ենք, որ հետաքրքրասիրությունը երեխաներին ուսումնական գործունեության մղող ամենամեծ խթանն է, որը նրանց դարձնում է իսկական ստեղծագործող անհատներ և հնարավորություն է ստեղծում, որ նրանք հաճույք ստանան ուսումնական առաջադրանքները կատարելիս: Այդ հիմնախնդրի լուծմանը մեծապես նպաստում են դասագրքերի մեթոդական կառույցի օժանդակ բաղադրիչները, որոնք խթանում են դասագրքի նյութերի յուրացման գործընթացը հետաքրքիր դարձնելուն, ստեղծում են ստեղծագործական-որոնողական դրդապատճառներ:

Մայրենիի դասագրքի օժանդակ բաղադրիչներ՝

- ստեղծում են ուսումնական նյութի նկատմամբ հետաքրքրաշարժ դրդապատճառներ,
- ապահովում են բոլոր աշակերտների գործուն մասնակցությունը,

- բացահայտում են և զարգացնում սովորողների ստեղծագործական, մտածողական ոչ ստանդարտ հնարավորությունները,
- ձևավորում են ազատ, անկաշկանդ մթնոլորտ, որը նպաստում է ազատ ինքնադրսևորմանը, համագործակցությանն ու հաղորդակցմանը,
- նպաստում են սովորողների ինքնաճանաչմանն ու ինքնագնահատման ունակությունների զարգացմանը,
- ապահովում են ուսումնական նյութի յուրացման արդյունավետությունը:



2.3

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մայրենիի դասագրքերի մեթոդական կառույցի օժանդակ բաղադրիչներն ունեն կրթադաստիարակչան կարևոր և բազմաշերտ նպատակները, սակայն մեթոդական գրականության մեջ գրեթե ներկայացված չեն տարրական դպրոցում նրանց կիրառման մեթոդներն ու հնարները, որի հետևանքով դասերի ժամանակ հաճախ անտեսվում են և դիտվում որպես ոչ պարտադիր ուսումնական նյութ:

Տարրական դպրոցի մայրենիի դասագրքերի ուսումնական բնագրերին կից տրված առաջադրանքների ընդհանուր թիվը շահեկան է ավելացնել՝ և ներկայացնել առարկայի որոշակի դասարանի համատեքստում՝ առաջադրանքների համակարգի մշակման հետ միասնաբար:

2. Մայրենիի ժամանակակից դասագրքերն, ի տարբերություն պատմականորեն գործածված դասագրքերի, ավելի բազմաբաղադրիչ են: Այս հանգամանքը մայրենիի դասագործընթացը դարձնում է հետաքրքրաշարժ, բավարարվում են սովորողների ոչ միայն ուսումնական դրդապատճառները, այլև աճում է մայրենի լեզվի, նրա օրինաչափությունների և կիրառման ոլորտների նկատմամբ հետաքրքրությունը, մեծանում է դասի գործընթացում սովորողների ակտիվությունն ու յուրաքանչյուրի մասնակցությունը:

3. Մայրենիի դասագրքերում զետեղված օժանդակ բաղադրիչները մեթոդապես ճիշտ կիրառելու դեպքում սովորողները մղվում են ստեղծագործական գործունեության, ծավալում են մտածական գործունեություն, հանգում են ինքնուրույն եզրակացությունների. դրսևորում են ակտիվ աշխատելու, համագործակցելու ցանկություն: Արդյունքում, զարգանում են սովորողների ստեղծագործական-որոնողական կարողությունները, հետաքրքրություն է ձևավորվում ուսումնասիրվող նյութի նկատմամբ:

4. Ուսումնական նյութի մատչելիության ապահովման համար անհրաժեշտ է բնագրին կից տրված առաջադրանքների քանակի և բուն նյութի հետ դրանց համաչափ հարաբերակցությունը: Առաջադրանքների քանակը և ուսումնական նյութերի հետ դրանց կապը սահմանելիս անհրաժեշտ է հիմք ընդունել այն, որ ուսումնական նյութի յուրացումն իրենից ներկայացնում է աշակերտի գործունեություն՝ տեղեկույթն ընկալելու և իմաստավորելու, այն վերամշակելու (վերհիշական և արդյունավետ) և այդ գործունեության ընթացքում ձեռք բերած տեղեկույթը մտապահելու գործունեություն:

5. Թեև որոնողական արդյունավետ գործունեությունն աշակերտների համար առաջացնում է զգալի դժվարություններ, սակայն ձեռք բերված հաջողությունները ոգևորում և ուրախացնում են նրանց, ձևավորում են ուսումնական դրական դրդապատճառներ, սովորողները ծավալում են համագործակցային ազատ գործունեություն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գյուլամիրյան Ջ., «Մայրենի 1», Եր., Լույս, 2012:
2. Գյուլամիրյան Ջ., «Մայրենիի ուսուցման մեթոդիկա», Եր., Զանգակ, 2018:
3. Թորոսյան Կ., Սարգսյան Վ., Խաչատրյան Հ. «Մայրենի 2-4 ուսուցչի ձեռնարկ», Եր., Մանմար, 2013:
4. <<ՀՀ հանրակրթության չափորոշիչներ>>, Եր., Անտարես, 2016:
5. <<ՀՀ տարրական դպրոցի մայրենիի առարկայական ծրագիր>>, Եր., Անտարես, 2014:
6. Սարգսյան Վ., «Այբբենարան», դասագիրք հանրակրթական դպրոցի 1-ին դաս. համար, Եր., Մանմար, 2020:
7. Սարգսյան Վ., «Մայրենի 2», դասագիրք հանրակրթական դպրոցի 1-ին դաս. համար, Եր., Մանմար, 2020:
8. Սարգսյան Վ., Գրիգորյան Ս., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., «Մայրենի 2», դասագիրք հանրակրթական դպրոցի 2-րդ դաս. համար, Եր., Մանմար, 2020:
9. Սարգսյան Վ., Գրիգորյան Ս., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., «Մայրենի 3», դասագիրք հանրակրթական դպրոցի 3-րդ դաս. համար, Եր., Մանմար, 2020:
10. Սարգսյան Վ., Գրիգորյան Ս., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., «Մայրենի 4», դասագիրք հանրակրթական դպրոցի 4-րդ դաս. համար, Եր., Մանմար, 2020:
11. Менделина С. Показатели трудоемкости домашней учебной работы школьников, М., 2014.
12. https://studopedia.org/1-69633.html
13. http://www.dealeducation.ru/gowems-668-2.html